



### Խմբագրական

## ՋԱՐԴԱՐԱՐՆԵՐԸ ՉԻՐԱՐ Կ'ԱՅՊԱՆԵՆ

Թուրքիոյ նախագահին Կազգայի մէջ իսրայէլեան ցեղասպանական արարքները դատապարտող խօսքին մէջ ուշադրութեան արժանի արտայայտութիւններ կային, որոնք նոյնիսկ Թուրքիոյ քաղաքականութիւնը խոցելի կը դարձնէին, եթէ պահ մը տարածաշրջանի տարբեր երեւոյթները դիտեց միջազգային օրէնքի դիտանկիւնէն:

Թուրքիոյ նախագահը յայտարարեց, որ Անգարա կրնայ Իսրայէլ մուտք գործել ճիշդ այնպէս ինչպէս Արցախ եւ Լիպիա մուտք գործեց, եւ ոչինչ կ'արգիլէ անոր:

«Պէտք է շատ հզօր ըլլանք, որպէսզի Իսրայէլ չկարենայ բռնագրաւել Պաղեստինի մէջ այս արարքները գործել: Ընդհանրապէս ինչպէս Ղարաբաղ մուտք գործեցինք, ճիշդ այնպէս ինչպէս Լիպիա մուտք գործեցինք, կրնանք Իսրայէլ մուտք գործել: Չկայ բան մը, որ չենք կրնար ընել», յայտարարեց Երտողան: Այստեղ Երտողան մոռցաւ յիշել Սուրիան, հաւանաբար յարաբերութիւններու կարգաւորման իր յոյսերը նկատի ունենալով:

Թուրքիոյ նախագահը փաստօրէն կը դատապարտէ բռնագրաւել Պաղեստինի մէջ Իսրայէլի մուտքը, խոստովանելով բռնագրաւել Արցախ Թուրքիոյ մուտքը, աւելին. Արցախի բռնագրաւման մէջ Թուրքիոյ հիմնական դերը:

Այս արտայայտութիւնը կը հաստատէ, որ Ատրպէյճան պիտի չկարենար դիմել Արցախի բռնագրաւման քայլին՝ առանց Թուրքիոյ հետ համադրելու գիւնտորական ողջ գործընթացը: Ու որքան ալ Թուրքիոյ մեղսակցութիւնը ուրացողներ ըլլան, Ատրպէյճանի ղեկավարը իր բանակի յաղթանակով «պարծենայ», յստակ կը դառնայ, որ Թուրքիա Զարաւայիս Կովկասի մէջ թուրանական ծրագրի իրագործման համար մուտք գործեց Արցախ ու ինք օրակարգ թելադրեց:

Այս տուեալներուն լոյսին տակ Զայաստան-Թուրքիա սահմանի բացման համար կատարուող հանդիպումները որքանով կրնան վստահելի ապագայ խոստանալ Զայաստանի պէս փոքր երկրի մը, եթէ Թուրքիան տնտեսապէս ալ աստիճանաբար թափանցէ Զայաստան, Ատրպէյճան վերահսկէ Զայաստանի Զիւսիս-հարաւ ճանապարհներու ռազմավարական կետերուն ու ազերի գիւնտորները կանգնելով Զայաստանի գիւղերու մերձաւորութեան, ուղղակի հսկողութեան տակ առնեն հայկական սահմանային գիւղերը:

Զանաւաբար հաւատացողներ ըլլան, որ Թուրքիա-Զայաստան բարիդրացիական յարաբերութիւնները ստիպողաբար կրնան մեղմացնել Թուրքիոյ եւ Ատրպէյճանի թշնամական վարքագիծը գէթ արտաքին աշխարհին դիմաց, սակայն Զայաստան պիտի յայտնուի նաեւ անոնց կիզակետին մէջ իր բաց սահմաններով, ուստի պէտք է ունենայ այնպիսի ուժեղ բանակ եւ երկրէն ներս յատկապէս առեւտուրի եւ տնտեսութեան վերաբերող այնպիսի սերտուած օրէնքներ, որոնք միջոցաւ գէթ հետագային կարելի կ'ըլլայ թուրք-ատրպէյճանական տնտեսական կախուածութեան ենթակայ չդարձնել Զայաստանը եւ զայն ժամանակի ընթացքին չպահել այդ երկիրներու տնտեսական եւ այլ ճնշումներուն ենթակայ:

Միւս կողմէ, Թուրքիոյ նախագահը իր ելոյթով կը շնայ Նեթանիահուն «մերօրեայ Զիթեր»-ը անուանել, այլ խօսքով ցեղասպան կոչել, պահ մը մոռնալով որ ինք եւս ուրացած է եւ կը շարունակէ ուրանալ նոյն Զիթերին վայրագութիւնները դրող Զայոց Տեղասպանութիւնը: Զիթերը չէր միթէ, որ կ'ըսէր, թէ այսօր ո՞վ կը յիշէ 1,5 միլիոն Զայերու Տեղասպանութիւնը:

Տակաւին Թուրքիոյ նախագահը կ'այպանէ աշխարհին շարունակ ժողովրդավարութեան ու մարդու իրաւունքներու դասեր տուող արեւմտեան երկիրները, որոնք յիշուի նուազագոյն ամօթը չզգացին Նեթանիահունի «մերօրեայ Զիթեր»-ին, ծափահարելու ԱՄՆ քոնկրետին մէջ իր ելոյթին ընթացքին: Իսկ ի՞նչ կարելի է ըսել Թուրքիոյ նախագահի ելոյթներուն ծափահարողներուն. այն նախագահին, որ շարունակեց Զայոց Տեղասպանութեան ուրացման քաղաքականութիւնը, հակառակ Տեղասպանութեան աշխարհի երկիրներու մեծամասնութեան կողմէ ճանչցուած ու դատապարտուած ըլլալուն, հակառակ թուրք պատմաբաններու վկայութիւններուն, Օսմանեան արխիւներու փաստերուն. այն նախագահին, որ մասնակցեցաւ արցախահայերու բռնի տեղահանման ու ցեղային զտման առաջնորդող գործողութիւններուն. այն նախագահին, որ Սուրիոյ պատերազմի տարիներուն ահաբեկիչներ ուղղեց Սուրիա, ֆինանսաւորեց անոնց բռնարարքները, յետոյ նոյն ահաբեկիչները փոխադրեց Արցախեան ճակատ:

Տակաւին Թուրքիոյ Արտաքին գործոց նախարարութիւնը հաղորդագրութիւն մը հրատարակելով կը յայտնէ որ. «Իսրայէլի ցեղասպան վարչապետ Բեն-համին Նեթանիահունի վերջը նացի ղեկավար Ատոլֆ Զիթերին նման պիտի ըլլայ»: Ու կ'աւելցնէ. «Պիտի չկարենաք զանոնք բնաջնջել ու այնպէս ինչպէս նացիները՝ հաւաքական ոճիրներու գործիչները հաշուետուութեան ենթարկուեցան, այդպէս ալ պաղեստինցիները ցեղասպանութեան ենթարկել փորձողները հաշուետուութեան պիտի ենթարկուին»:

Ու թէեւ Ատրպէյճանի Պաշտպանութեան նախարարութիւնը հաշտ աչքով չդիտեց Թուրքիոյ նախագահին այս ելոյթը ու շեշտեց, որ Ատրպէյճանի գիւնտորական գործողութիւններուն որեւէ երկրի գիւնտորներու մասնակցութեան մասին յայտարարութիւնը որեւէ հիմք չունի, սակայն Թուրքիան վկայեց, որ Ատրպէյճանի գիւնտորական կարելիութիւնները թոյլ չէին տար Արցախի բռնագրաւման, եթէ չըլլար Թուրքիան:

Զաշուտութեան պիտի ենթարկուին, այո՛, սակայն բոլոր ցեղասպաններն ու ցեղասպանութիւնները հրահրողները, ուրացողները, երբ հասնին պատեհ ժամանակն ու պայմանները:

Այսօր շարդարները գիրար կ'այպանեն, ողջ մարդկութեան առջեւ ծաղրի ենթարկելով միջազգային օրէնքները, մարդկային իրաւունքները եւ մասամբ նորին: Միջազգային ընտանիքի անտարբերութիւնն է գիրեք անմարդկայնութեան այս մակարդակին հասցնողը:

Իսկ եթէ պահ մը պատկերացնենք, թէ Թուրքիան կրնայ մտնել Իսրայէլ, պիտի հաստատենք, անտարակոյս, որ ան պիտի մտնէ ո՛չ թէ գիւնտորական գործողութիւններ իրականացնելու, այլ քարիւղ վաճառելու Իսրայէլի պատերազմական օդանւերուն համար:

«Գ.»

-Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ շնորհաւորագիր մը յղեց Վենետիայի նախագահ Նիքոլաս Մատորոյին՝ նախագահ վերընտրուելուն առիթով: Նախագահ Ասատ շնորհաւորեց նաեւ Վենետիայի բարեկամ ժողովուրդը նախագահական ընտրութիւններու յաջող ընթացքին առիթով:



Նախագահը եզրափակելով շեշտեց, որ համաշխարհային գետնի վրայ տեղի ունեցած փոփոխութիւնները երկու երկիրներէն կը պահանջեն գործակցիլ եւ զօրավիզ կանգնիլ իրարու որպէս անկախ պետութիւններ: Այս նախագահը Սուրիա-Վենետիայ պատմական յարաբերութիւնները տարբեր ուղորտներու մէջ զարգացնելու իր պատրաստակամութիւնը յայտնեց՝ ի նպաստ երկու երկիրներու ժողովուրդներուն:

-Սուրիոյ Արտաքին գործոց նախարարութիւնը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ, որուն մէջ խստիւ դատապարտեց իսրայէլեան յարձակումը Լիբանանի մայրաքաղաք՝ Պեյրութի հարաւային արուարձանին մէջ գտնուող բնակարանային շրջանի մը վրայ, շեշտելով իր զօրակցութիւնը Լիբանանին եւ անոր ժողովուրդին: Նախարարութիւնը աւելցուց. «Իսրայէլ կը շարունակէ ծաւալապաշտ իր քաղաքականութեան համար պատրուակներ ստեղծել: Ան Պեյրութի հարաւային արուարձանին վրայ անօդային երեք հրթիռներ արձակեց, որուն հետեւանքով անմեղ զոհեր արձանագրուեցան»:

Նախարարութիւնը եզրափակելով խստիւ դատապարտեց Լիբանանի գերիշխանութեան սպառնացող Իսրայէլի յարձակումը, որ տեղի ունեցաւ բռնագրաւուած Կուլանի Մաճտալ Շամս արուարձանին մէջ իր գործած ոճիրէն երկու օր ետք, խախտելով միջազգային օրէնքը:



-Սուրիոյ Արտաքին գործոց նախարարութիւնը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ, որուն մէջ խստիւ դատապարտեց Իրանի Իսլամական Զանրապետութեան գերիշխանութեան դէմ իսրայէլեան գրոհը, որ միջազգային օրէնքի խախտում կը համարուի: Նախարարութիւնը ըսաւ. «Չորեքշաբթի, 31 Յուլիս 2024-ին, Իսրայէլ ոճիր մը եւս գործեց Իրանի մայրաքաղաք Թեհրանի մէջ ահաբեկչական գրոհով մը, որուն հետեւանքով պաղեստինեան ԶԱՄԱՍ դիմադրութեան շարժումի քաղաքական թեւի ղեկավար Իսմայիլ Զանիէ նահատակուեցաւ»:

Նախարարութիւնը աւելցուց. «Սոյն անմարդկային արարքը շարունակութիւնն էր Կուլանի, Լիբանանի եւ Իրաքի վրայ իր յարձակումներուն, ինչպէս նաեւ Կազգայի եւ Այրարդանանի մէջ Պաղեստինի ժողովուրդին դէմ իրագործած ցեղասպանութեան»: Նախարարութիւնը եզրափակելով ըսաւ. «Սուրիա իր զօրակցութիւնը կը յայտնէ Իրանի Իսլամական Զանրապետութեան եւ իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Պաղեստինի ժողովուրդին, իր զօրակցութիւնը յայտնելով անոր իսրայէլեան ոճիրներուն դէմ իր պայքարին մէջ, մինչեւ իր օրինական իրաւունքներուն վերատիրացումը եւ պաղեստինեան հողին վրայ անկախ պետութեան հիմնումը՝ Երուսաղէմի մայրաքաղաք հռչակումով»:

-Սուրիոյ Կրթութեան նախարարութիւնը յայտարարեց, որ Սուրիոյ մէջ 2024-2025 դպրոցական ուսումնական տարեշրջանը պիտի սկսի 8 Սեպտեմբեր 2024-ին: Սոյն թուականը ի գօրու է դպրոցական բոլոր կարգերուն համար՝ մանկապարտեզէն մինչեւ երկրորդական: Նախարարութիւնը աւելցուց, որ ուսուցիչները եւ վարչական պաշտօնեաները աշխատանքի պիտի սկսին Կիրակի, 1 Սեպտեմբեր 2024-ին:



Լուրեր Հայաշխարհին

ՔՐՄԷԻ ԶՄԶԵՁԵՄ ԶՄՊՐՁՈՒՄ ԵՎ ԵՅՈՒՆՆԵՐ ԶՄԻՍՆԱԿԱՆ ԶՄՊՐՁՈՒՄ

ՔՐՄԷԻ ԶՄԶԵՁԵՄ ԶՄՊՐՁՈՒՄ ԵՎ ԵՅՈՒՆՆԵՐ ԶՄԻՍՆԱԿԱՆ ԶՄՊՐՁՈՒՄ

Արաբական Միացյալ Էմիրություններու մօտ Հայաստանի դեսպան Կարեն Գրիգորյան, համատեղության կարգով նշանակուեցաւ Սեուտական Արաբիոյ մօտ Հայաստանի դեսպան (նստավայրը՝ Ապու Տապի):



Հայաստանի եւ Սեուտական Արաբիոյ միջեւ դիվանագիտական յարաբերությունները հաստատուեցան Նոյեմբեր 2023-ի վերջաւորութեան: Արձանագրութիւնը ստորագրեցին Կարեն Գրիգորյան եւ Սեուտական Արաբիոյ դեսպան Սուլթան ալ-Անքարի, Ապու Տապի մէջ:

Սեուտական Արաբիա հրաժարեցաւ Հայաստանի հետ դիվանագիտական յարաբերություններ հաստատելէ Արցախի հակամարտութեան պատճառով: Ռիատ յայտարարած էր, թէ Հայաստանի հետ դիվանագիտական յարաբերություններ պիտի չհաստատէ, այնքան ատեն որ Ատրպեյճանի տարածքային ամբողջականութիւնը չէ վերականգնած:

Սակայն այս երկրի քաղաքականութիւնը Երեւանի նկատմամբ փոփոխուեցաւ, երբ քանի մը տարի առաջ Ռիատի յարաբերությունները Անգարայի եւ անոր սերտ դաշնակից Պաքուի հետ վատթարացան:

ԶԾԾՔԵՊՈՒՄ ԶՄՊՐՁՈՒՄ ԶՄՊՐՁՈՒՄ ԶՄՊՐՁՈՒՄ

Արցախի մշակութային ժառանգութեան նկատմամբ Ատրպեյճանական վանտալիզմի, ոչնչացման կամ իւրացման քաղաքականութիւնը կը շարունակուի: Իրենց այս «գործունեութեան» մէջ ատրպեյճանցիները միջազգային գործընկերներ գտած են եւ, ցաւալիօրէն, անոնց ձեռքերը հասած են Վատիկան: Ազգային ժողովի պատգամաւոր Լիլիթ Քալստեան գրած է.



«Վատիկանի մէջ լոյս տեսնող L'Osservatore Romano պարբերականին մէջ, Ռոսսելա Ֆապիանիի ստորագրութեամբ օրերս լոյս տեսած է «Քրիստոնէութեան ակունքները Ատրպեյճանի մէջ. ալպանական առաքելական եկեղեցւոյ հետքերով» բովանդակութեամբ յօդուած մը, ուր հեղինակը կը ներկայացնէ «Կովկասեան Ալպանիա»՝ իրականութեան մէջ Արցախ կատարած իր, այսպէս կոչուած, ուսումնասիրական-ճանաչողական այրը:

«Յղումը ընելով տեղացի գիտաշխատողին, յօդուածագիրը տարածած ամրագրած է տարածաշրջանի մէջ հայերու եկուորութեան վարկածը՝ արձանագրելով, որ մենք ատրպեյճանական հողեր եկած ենք Իրանէն եւ Թուրքիայէն: Մէկ այլ հաստատման համաձայն ուտիները բռնի դաւանափոխ եղած են եւ առաքելական եկեղեցւոյ հետեւորդ դարձած են տեղւոյն հայերուն կողմէն:

«Ատրպեյճան կատարած այցելութեան ընթացքին Ռ. Ֆապիանիին ուղեկցած է Ախուլստովի աշակերտ, ալպանական մշակոյթի «գիտակ» Ս. Հաճիեան: Եւ, քննարկաբար, հեղինակը անվերապահօրէն եզրայանգած է, որ 13-րդ դարու վանական համալիրներ՝ Դադիվանքը /յօդուածին մէջ հուտապէնք գործածուած է/ եւ Գանձասարը /յօդուածին մէջ՝ Կենճասար/ Ատրպեյճանի տարածքին մէջ գտնուող ալպանական մշակոյթի եւ ալպանական եկեղեցւոյ խոշորագոյն դրսեւորումներ են:

«Ինչպէս կը տեսնէք, Արցախի հայկական հետքի վերացման ատրպեյճանական քաղաքականութիւնը Նոր որակներ եւ դրսեւորումներ կը ստանայ: Ցաւալի է, բայց իրողութիւն է այն, որ Ատրպեյճան յաջողած է իր մշակութային գտումի/մշակութային ցեղասպանութեան/ակամայ մասնակից դարձնել ոչ անելի ոչ պակաս՝ Վատիկանը: Ի դէպ վերոյիշեալ յօդուածին մէջ Դադիվանքը կը ներկայացուի որպէս ալպանական Վատիկան...»:

Իրանի Նորընտիր Նախագահ Մասուտ Փեզեշքեանի երդման արարողութեան մասնակցելու նպատակով Իրան գտնուող Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան նախքան արարողութիւնը հանդիպումներ ունեցաւ Փեզեշքեանի եւ Իրանի գերագոյն հոգեւոր պետ այաթոլլա սայեդ Ալի Խամենէիի հետ:

Ալի Խամենէիի հետ հանդիպումին ընթացքին, հոգեւոր պետը շեշտեց, որ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը Չանգեզուրի երթուղին վնասաբեր կը նկատէ Հայաստանի համար եւ կը շարունակէ տեր կանգնիլ այս դիրքորոշման:

Ըստ «Մեք» լրատու գործակալութեան՝ ան ըսաւ հետեւեալը. «Մենք խորապէս կը հաւատանք Հայաստանի հետ յարաբերություններու զարգացման: Երկու երկիրներուն միջեւ համագործակցութիւնը պիտի շարունակուի շահերու հիման վրայ եւ՝ անկախ այլ մարդոց քաղաքականութենէն: Օտարները պետք չէ սահմանափակումներ ստեղծեն երկիրներուն՝ դրացիներուն հետ յարաբերություններուն համար»:

Փաշինեան իր կարգին ըսաւ, որ Հայաստան բազմաթիւ անգամներ յայտարարած է, թէ ոչ մէկ անդրատարածաշրջանային երթուղի կ'ընդունի իր տարածքին մէջ:

Չորուցակիցները յայտնեցին, թէ իրենք համոզուած են, որ Հայաստան եւ Իրան կը շարունակեն ջերմ ու բարեկամական յարաբերություններու զարգացման միտող քայլերը՝ ի նպաստ երկու պետություններու եւ ժողովուրդներու յառաջընթացին:

Փեզեշքեան Փաշինեանի հետ հանդիպումին ընթացքին, կարեւոր նկատեց բարեկամ Հայաստանի հետ քաղաքական, տնտեսական եւ մարդասիրական ոլորտներուն մէջ յարաբերություններու շարունակական զարգացումը:

Փեզեշքեան կարեւոր նկատեց տարածաշրջանին մէջ խաղաղութիւն եւ կայունութիւն հաստատելու հետեւողական ջանքերը: Ան դիտել տուաւ, որ Իրանի համար առանցքային նշանակութիւն ունի տարածաշրջանին մէջ խաղաղութեան պահպանումը՝ աւելցնելով, որ Թեհրան եւս բոլոր հարցերը երկխօսութեան միջոցով կարգաւորելը անհրաժեշտ կը նկատէ:

Փաշինեան կարեւոր նկատեց իրանեան կողմից ներգրանջութիւնը Հիւսիս-հարաւ մայրուղիի, մասնաւորաբար Ագարակ-Քաջարան հատուածի կառուցման մէջ: Ընդգծուեցաւ նաեւ Հայաստան-Իրան սահմանային անցակէտի արդիականացման ուղղութեամբ իրականացուող քայլերուն կարեւորութիւնը:

ՔՐՄԷԻ ԶՄԶԵՁԵՄ ԶՄՊՐՁՈՒՄ ԶՄՊՐՁՈՒՄ

Ներուն համապատասխան գնահատել թեքնիք կարիքները, որոնք կարելիութիւն պիտի ընձեռեն գործարկել Ախուրիկ-Աբեաքա երկաթուղիի սահմանային անցակէտը, ինչպէս նաեւ փոխադարձաբար դիւրացնել վիզայի ընթացակարգերը դիվանագիտական-պաշտօնական անձնագիրներ ունեցողներու համար:

Անոնք դարձեալ ընդգծեցին կարգաւորման գործընթացը առանց որեւէ նախապայմանի շարունակելու պայմանաւորութիւնը՝ երկու երկիրներուն միջեւ ամբողջական կարգաւորման վերջնական նպատակին հասնելու համար:

Հանդիպման սկիզբը յատուկ ներկայացուցիչները շրջեցան Մարգարայի վերանորոգուած անցակէտին մէջ:

Ռուբինեան «Էքս»-ի իր էջին վրայ գրութեան մը միջոցով կ'անդրադառնայ Բըլըչի հետ հանդիպումին՝ զայն լաւ նկատելով: «Հաստատած ենք նախապէս ձեռք բերուած համաձայնությունները եւ համաձայնած վստահութեան ամրապնդման Նոր միջոցներու շուրջ, ներառեալ՝ թեքնիք պահանջներու գնահատումը, որոնք անհրաժեշտ են մեր երկիրներու միջեւ երկաթուղային հաղորդակցութեան գործունեութեան ապահովման համար», գրած է Ռուբինեան:

Բըլըչ եւս անդրադարձաւ հանդիպումին՝ հրապարակելով տեսանկիւ մը եւ գրելով հետեւեալը. «Մենք գումարեցինք հանդիպումներու հինգերորդ փուլը Թուրքիոյ եւ Հայաստանի սահմանային գօտիին մէջ՝ առաւօտեան հայկական կողմին, իսկ կէսօրին՝ թրքական կողմին մէջ: Մենք կառուցողական փոխըմբռնումով քննարկեցինք կարգաւորման գործընթացի բոլոր երեսները եւ հետագայ յառաջընթացի կարելիությունները»:



ՀԾ, ՕՍԾ ԾՁԲՔՄՕՁՄ ԶՅԳՍ ԳՅԳ  
ՕՐԻՄՔ ԶՁՕՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁ  
ՕՁԵՄՁԻՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁ  
ԾՁՕՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁ



Յարութ Սասունեան

Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիևի արտաքին քաղաքականության բաժնի ղեկավար Յիքմեթ Յաճիե 21 Յուլիսին յայտարարեց, որ Յայաստան պաշտոնապես հրաւիրուած է Պաքուի մէջ 11-22 Նոյեմբերին կայանալիք Կլիմայի փոփոխութեան հարցերով ՄԱԿ-ի միջազգային համաժողովին (COP29): Յաճիե ըսաւ, որ հրաւերը Ատրպեյճանի բնապահպանութեան եւ բնական պաշարներու նախարար Մուխթար Պապաեւի կողմէ ուղարկուած է Յայաստանի արտաքին գործերու նախարարութեան: Թէեւ ՄԱԿ-ի բոլոր անդամները ուղղակի կերպով կը հրաւիրուին, Յաճիե այնպէս ներկայացուց, կարծես Ատրպեյճան յատուկ բարեհաճութիւն ըրած է Յայաստանի՝ հրաւերը որակելով իբրեւ «բարի կամքի դրսեւորում եւ ներառական մտեցում երկու երկիրներու միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու բացակայութեան պարագային»: Յաճիե աւելցուցած է. «Յիմա ժամանակն է, որ Յայաստանի իշխանութիւնները որոշում կայացնեն»:

Յայաստանի պաշտօնէտները տակաւին պաշտօնական պատասխան չեն տուած հրաւերին: Անոնք խուսափողական երկու մեկնաբանութիւն ըրած են. վարչապետ Նիկոլ Փաշինեանի մամուլի խօսակը ըսաւ՝ «Նման այց նախատեսուած չէ վարչապետի աշխատանքային օրակարգին մէջ», իսկ ԶԶ արտաքին գործերու նախարարին խօսակը լրագրողներուն ըսաւ, որ «հարցին անդրադարձ ըլլալու պարագային կը տեղեկացնենք»:

Պաքուն կը պնդէ, որ այդ առիթով 70-80 հազար զբօսաշրջիկ կ'այցելէ Պաքու: Կը սպասուի, որ համաժողովին մասնակցին հազարաւոր լրագրողներ, միջազգային բնապահպանական կազմակերպութիւններու պատուիրակներ, տարբեր կառավարութիւններու բարձրաստիճան պաշտօնէտներ եւ տասնեակ պետութիւններու ղեկավարներ, ամբողջ աշխարհէն: Աշխարհի 198 երկիր ստորագրած է Կլիմայի փոփոխութեան մասին համաձայնագիր:

7 Դեկտեմբեր 2023-ին, Յայաստանի վարչապետի աշխատակազմը եւ Ատրպեյճանի նախագահի վարչակազմը միացեալ յայտարարութիւն տարածած էին, ուր կը բացայայտուէր, որ Կլիմայի համաժողովը հիւրընկալող Ատրպեյճանի նկատմամբ Յայաստանի վերջին իրաւունքը չկիրառելու դիմաց՝ Ատրպեյճան ազատ կ'արձակէ 32 հայ ռազմագերիները, որոնք կը պահուէին Պաքուի բանտերուն մէջ, իսկ Յայաստան իր հերթին ազատ կ'արձակէ երկու ատրպեյճանցի զինուորներ, որոնք գերի ինկած էին Յայաստանի սահմանը հատելէ եւ հայ քաղաքացի մը սպանելէ ետք: Աւելին, Ատրպեյճան համաձայնած է աջակցիլ Յայաստանի թեկնածութեան Արեւելեան Եւրոպայի խումբին՝ COP29-ի Բիւրոյի կազմին մէջ: Այդ ատեն ես գրեցի, որ նախագահ Ալիե այնքան տարուած է Պաքուի մէջ այս միջազգային հեղինակաւոր համաժողովի կայացման գաղափարով, որ Յայաստան պէտք է պնդէր, որ Ատրպեյճան ազատ արձակէ 2020-ի պատերազմէն ետք Պաքուի մէջ պահուող բոլոր հայ ռազմագերիները, ինչպէս նաեւ՝ Սեպտեմբեր 2023-էն ի վեր պահուող Արցախի ութ բարձրաստիճան պաշտօնէտները:

Վերջին ամիսներուն, քանի մը միջազգային հաւաքներու ժամանակ նախագահ Ալիե յոխորտացած է, որ Ատրպեյճան կը հիւրընկալէ COP29 համաժողովը՝ այդ վերագրելով «իր երկրի նկատմամբ միջազգային յարգանքի աճով՝ երկուքուկէս ամիս անց» անոր կողմէ Արցախի բռնագրաւումէն եւ ցեղային զտումներէ ետք: «COP29-ն նախագահելը եւ այս ձեռնարկի կայացումը Պաքու, վառ օրինակներ են այն մեծ վստահութեան, որ միջազգային հանրութիւնը կը տածէ մեր երկրին նկատմամբ: Գրեթէ 200 երկիր միաձայն պաշտպանած է մեր թեկնածութիւնը», հպարտացած է Ալիե:

Յայաստանի կառավարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեանէն յայտնած են, որ Փաշինեան բաքուի մէջ կայանալիք COP29 համաժողովին մասնակցելու Ատրպեյճանի հրաւերին կ'անդրադառնայ Օգոստոսին կայանալիք մամուլի ասուլիսի ընթացքին:

Ատրպեյճանցի պաշտօնէտները ակնարկած են, որ Պաքուի մէջ Նոյեմբերին կայանալիք համաժողովի ընթացքին կրնայ ըլլալ, որ Փաշինեան եւ Ալիե նախնական համաձայնագիր մը ստորագրեն, որ կը նախանշէ վերջնական խաղաղութեան պայմանագրի հիմնական սկզբունքները: Յաճիե կը ծանուցէ «COP զինադադար»-ի գաղափարը՝ համաժողովի ընթացքին դադրեցնելու բոլոր ռազմական գործողութիւնները ամբողջ աշխարհի վրայ՝ նման «Ողիմպիական զինադադար»-ի հայեցակարգին՝ խթանելու համար Ատրպեյճանի կեղծ պատկերը՝ իբրեւ խաղաղարար: Մայիսի վերջին, նախագահի

յատուկ բանագնաց Էլչին Ամիրբեկով նշած է, որ համաժողովը կըրնայ լաւ հնարաւորութիւն ըլլալ Յայաստանի հետ խաղաղութեան պայմանագիր ստորագրելու համար:

7 Մայիսին կայացած մամուլի ասուլիսին, Փաշինեան յայտարարեց, որ Երեւան համաձայն է՝ մինչեւ Նոյեմբեր Ատրպեյճանի հետ խաղաղութեան պայմանագիր ստորագրելու: Այսուհանդերձ, Յայաստանի արտաքին գործերու նախարարութիւնը 19 Յունիսին նախագրուցուց, որ «Ատրպեյճան կ'ընէ կարելի ամէն բան՝ Նոյեմբերին, Պաքուի մէջ COP29 գագաթաժողովին, Յայաստանի հետ խաղաղութեան պայմանագրի ստորագրման գործընթացը վիճեցնելու համար՝ Յայաստանի Յանրապետութեան դէմ նոր յարձակում սանձազերծելու նպատակով»:



Յայտնի չէ, թէ Օգոստոսին ինչ պիտի յայտարարէ Փաշինեան՝ Նոյեմբերին կայանալիք Պաքուի համաժողովին իր հնարաւոր մասնակցութեան կապուած: Սակայն, իմ կարծիքով, Փաշինեան պէտք է խուսափի՝ Յայաստանի հաշուոյն համաշխարհային լսարանի առջեւ պարզեալին միաւորներ ձեռք բերելու նպատակով Ալիեի ստեղծած ծուղակը իյնալէն՝ ցուցադրելով Փաշինեանի կամ անոր ներկայացուցիչին մասնակցութիւնը Պաքուի համաժողովին: Ասիկա լուրջ ձեռքբերում կ'ըլլայ Ալիեի համար՝ հանդէս գալով իբրեւ խաղաղարար, միաժամանակ շարունակելով յաճախակի սպառնալիքներ իրենց հանդէպ Յայաստանի հասցէին եւ մեծցնելով Յայաստանէն զիջումներու իր պահանջները: Աւելին, խաղաղութեան պայմանագրի բողոքի տակ, թուղթի տակ ստորագրելը չի խոչընդոտեր Ալիեը՝ Յայաստանի վրայ հետագայ յարձակումներէն:

Կը կարծեմ, որ ոչ մէկ հայ պաշտօնէտ պէտք է Նոյնիսկ մտածէ Պաքու մեկնելու մասին, քանի դեռ Ատրպեյճան կը պահէ տասնեակ հայ ռազմագերիներ եւ 2021-էն բռնագրաւած է Յայաստանի Յանրապետութեան որոշ հատուածներ: Ատրպեյճանի կողմէ առանց բոլոր հայ բանտարկեալներու նախապէս ազատ արձակման եւ Յայաստանի տարածքներէն Ատրպեյճանի դուրս գալուն, ոչ մէկ հայ պաշտօնէտ պէտք է երթայ Ատրպեյճան եւ ոչ իսկ հանդիպում ունենայ կամ բանակցութիւն վարէ Պաքուի հետ:

Նուազ բաղձալի այլընտրանք կ'ըլլայ, որ Փաշինեան կամ իր ներկայացուցիչը մեկնի Պաքու եւ պահանջէ ելոյթ ունենալ 198 երկիրներու միջազգային համաժողովին՝ դատապարտելով Ատրպեյճանի բազմաթիւ սպառնալիքները՝ ներխուժելու Յայաստան, Արցախի բռնագրաւումը, 120 հազար արցախահայերու ցեղային զտումները, մերժումը՝ միջազգային երաշխիքներով անոնց վերադարձը իրենց պապենական հայրենիք, բոլոր հայ ռազմագերիները ազատ չարձակելը եւ ատրպեյճանական զօրքերը Յայաստանէն դուրս չհանելը:

Այսուամենայնիւ, մեծ հաւանականութիւն կայ, որ Ատրպեյճան կրնայ վերջին պահուն հրաժարիլ իր խոստումներէն՝ թոյլ չտալով Յայաստանի ներկայացուցիչին՝ ելոյթ ունենալ համաժողովին: Յայաստանի համար շատ աւելի լաւ տարբերակ կ'ըլլար հրաժարումը համաժողովին մասնակցելէ, այնքան ատեն, որ համաժողովէն առաջ, Ատրպեյճան ազատ չէ ձգած հայ ռազմագերիները եւ իր զօրքերը դուրս չէ բերած Յայաստանէն:

Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան  
Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան

www.kantsasar.com  
www.kantsasar.com  
www.kantsasar.com

## ՏՄԵՂՆԻՆԻ ՕԾԾՍԾ



Սազո հայոյեան

Անգամ մը եւս պատիւ ունեցայ ընկերներուս հետ բեմ բարձրանալու եւ միասին ներկայացնելու նոր թատերգութիւն մը՝ «Օսգար»-ը: Աւելի քան երեք ամիս ամենօրեայ եւ յոգնեցուցիչ աշխատանքէ ետք յաջողեցանք բեմ բարձրանալ ու այս անգամ հանդիսատեսին հրամցնել այլ կատակերգութիւն մը:

Անշուշտ մեր յաջողութիւնը կը պարտինք շատ սիրելի շէֆին՝ բեմադրիչ ու թատերագիր Վաչէ Ատրուսինին, որ ճիգ չխնայեց մեր նաը ապահով նաւահանգիստ հասցնելու: Բեմադրիչին բժախնորհրդ աշխատանքը եւ ամենէն փոքր մանրա-

լե գերազանցեց ինքզինք:

Միշէլ Մարթինի նոր անկիւններ բացաւ դերասանական իմ փորձառութեան մէջ եւ ստիպեց խաղարկութեան մակարդակս նոր փուլի հասցնել: Այս յաջողութիւնը կը պարտին ընկերներուս եւ անշուշտ պատկառելի վաստակ ունեցող բեմադրիչիս՝ Վաչէ Ատրուսինին, ինչպէս նաեւ անոր տիկնոջ՝ Լանայի հոգատարութեան:

Պէտք է խոստովանիմ, որ այս աշխատանքս չէի կրնար յաջողցնել առանց ընտանիքիս անսահման համբերութեան եւ աջակցութեան: Այդ քաջալերանքը մեծապէս կ'ոգե-

խաղացողը, այնքան ճիշդ հասկցածէ իւրացուցած էր ֆրանսուիի կերպարը, որ սովորական արտայայտութիւններն ու շարժումներն անգամ ամէն պահու տարբեր երանգով մը կը համեմեր, կարծեք իսկական ֆրանսուի մը ըլլար:

Ժազլինին դերը կը խաղար Ալին Քիլեճեանը: Ալինը որպէս ուսանող դասերով ծանրաբեռնուած ըլլալով մէկտեղ միշտ ներկայ էր փորձերուն եւ ֆրանսուի երիտասարդ աղջկան դերը խաղալով կը ջանար իր լաւագոյնը ներկայացնել:

Աննային դերը կը խաղար Սերենա Պերպերեանը: Սերենան այս անգամ կրցած էր նուաճել նոր փուլ մը իր խաղարկութեան մէջ: Ան աւելի համարձակ ներկայութիւն դարձած էր բեմին վրայ:

Օսգարին դերը խաղցաւ Նազո Ատուրեանը եւ պէտք է ըսել, որ Նազոն յաղթահարեց իր ամէկտուութիւնը եւ մուտք գործեց թատրոնի իսկական, անկաշկանդ աշխարհ:

Վարիչի դերը խաղացողը Արշակ Զապէշեանն էր, որ թէեւ նոր դերակատար էր, բայց իր լուրջ մօտեցումով զարմացուց բոլորս: Իսկ Լաթաքիոյ մեր ներկայացումին ընթացքին նոյն դերը կատարեց Գեորգ Թիւթիւնեանը, որուն համեստ նկարագիրն ու դերասանական փորձա-

ռութիւնը իմ պարզ գրիչով կարելի չէ նկարագրել: Ան նուիրումով թատրոնին ծառայած է երկար տարիներ եւ օրինակ դարձած մեր բոլորին:

Նոր յայտնութիւն մըն էր կարծեք Սոֆիին դերը խաղցող Անժելա Չաղլասեանը, որ գրաւիչ ներկայութիւն դարձաւ բեմին վրայ իր աշխույժ եւ համարձակ խաղարկութեամբ: Տաղանդաւոր Անժելան իր լաւ խաղարկութեամբ հմայեց բոլորը:

Եւ վերջապէս Շարլոթին դերը խաղացող Սոնա Չալօղլեանը, որ որպէս նոր դերակատար հարստացուց մեր խումբը ու թէեւ անոր առաջին փորձառութիւնն էր բեմին վրայ, սակայն մեծ ջանք թափեց իր դերը լաւագոյն ձեւով խաղալու:

Յոյսով եմ, որ շատ երկար չի տեւեր մեր դադարը եւ շուտով կ'անցնի յաջորդ ներկայացումի պատրաստութեան, քանի որ թատրոնը կլանեց մեզ, անդրադարձուց մշակոյթի ուժեղ դերին՝ մարդու եւ հաւաքականութեան ներաշխարհի հարստացման մէջ:

Շնորհակալութիւն Յամազգայինի Շրջանային Վարչութեան եւ «Լեւոն Շանթ» թատերական միաւորի վարչութեան, որոնք զօրավիգ կանգնեցան ու քաջալերեցին բոլորս:



մասնութիւններուն հետեւիլը, ինչպէս նաեւ իւրաքանչիւր դերակատարի հետ ինքնամբով ու հոգատարութեամբ վարուիլը թատերական արուեստի խորունկ աշխարհին հաղորդակից դարձուց մեզ: Երբ մեր թափը կը սկսէր նուազիլ, ինք մեզի ուժ կու տար եւ կը վերստեղծէր խանդավառ աշխատանքի մթնոլորտ:

Թատերական ներկայացումը հաւաքական աշխատանքի արդիւնք է, բոլորս ներդաշնակ խաղարկութեամբ, մէկս միւսին դերն ու թափած ճիգը հասկնալով պատրաստուեցանք ելոյթին, ուստի խորին շնորհակալութիւնս բեմի սիրելի ընկեր-ընկերուհիներուս: Անոնք փորձի առաջին օրերէն, մանաւանդ ելոյթի օրերուն, իրենց հմուտ խաղարկութեամբ, ստիպեցին բարձրացնելու դերակատարութեանս որակը, ըլլալու անկեղծ ու ճկուն՝ հասնելու համար ընկերներուս թափին եւ որակին:

Այս անգամուսան դերս՝ Միշէլ Մարթինի, շատ հետաքրքրական ու նոր էր ինձի համար: Ֆրանսացի այս պաշտօնեան խորամանկ էր, բայց նիւթապէս բարուք չէր այնքան որքան իր գործատերը՝ պարոն Պարինէն, որուն դերը կատարեց իմ շատ սիրելի եւ տաղանդաւոր ընկերը՝ Շանթ Ուրիշիկեանը: Գրեթէ անկարելի էր հասնիլ Շանթին խաղարկութեան որակին, քանի որ այն իր ուսերուն բեռնուցած էր խաղարկութեան հիմնական կշիռը եւ ոչ միայն արդարացուց գայն, այ-

լորէր գիս՝ հետեւողական ըլլալու եւ բարելաւելու կարելիութիւններս:

Մեծ շնորհակալութիւն մեր շատ սիրելի հանդիսատեսին, որ ինչպէս միշտ այս անգամ ալ եղաւ մեզ խրախուսողը, լեցուց սրահը ու իր ծափողջոյններով խանդավառեց մեզ:

Հայ թատրոնը սիրող եւ գնահատող սիրելի՛ հալէպահայեր, դուք փաստեցիք, որ թատրոնը պէտք է ապրի մեր բեմերուն վրայ, ապրի ու զարգանայ: Ձեր ներկայութիւնը եւ քաջալերանքը մեզ կը յորդորեն հոգատար ըլլալ ու միշտ բաց պահել «Լեւոն Շանթ» թատերախումբին վարագոյրը:

Քանի մը համեստ տողերով անդրադառնամ նաեւ ընկերներուս բեմական աշխատանքին ու եռանդին:

Սկսիմ գլխաւոր դերակատար՝ Շանթ Ուրիշիկեանով, որուն հետ մէկեւ աւելի թատերական խաղարկութեան մասնակցած եմ: Շանթին մասին երկու տողով խօսիլը արդար չէ, արդար ըլլալու համար հաւանաբար էջեր պէտք է գրել: Իր փորձառութենէն օգտուիլն ու իրեն հետ դեր խաղալը թատերական արուեստին արժէքը ընկալելու պատեհ առիթ մըն է իրողապէս:

Պարոն Տը Պուն ներկայացուց Սազո Պալպանեանը: Ան յաջողեցաւ ընտելանալ այս իւրայատուկ անձնաւորութեան կերպարին հետ եւ հարազատօրէն ներկայացուց իր դերը:

Մարինէ Մարգարեանը, կամ ֆրանսուիի տիկին Ժուլիէթի դերը

Առաջնորդութիւն  
Բերիոյ Հայոց Թեմի

Ուսումնական  
Խորհուրդ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

2024 - 2025 տարեշրջանին Ազգային Միացեալ Նախակրթարանը կարիքը ունի հետեւեալ նիւթերը դասաւանդող համալսարանաւարտ մասնագետներու.

- Արաբերենի (Առաջին եւ չորրորդ կարգերու)
- Անգլերենի
- Համակարգիչի
- Ձեռային աշխատանքի
- Խորհրդատու - հոգեբանի

Հեռ. 0932890929 / 0966463195

### ՏՄԵՂՆԻՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Չարմիկ Զիլմբոշեան-Պողիկեան  
Սրբագրիչ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան  
Օգնական սրբագրիչ՝ Աննա Սաղապազարեան  
Ձեւաւորող՝ Յովսէփ Չալօղլեան  
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան  
Արաբերեն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան  
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պողոսեան  
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլմբոշեան  
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

## Պրիմալկես

### ԽԱՌՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՓԱՐԻՉԵՆ



Մարուշ Երամեան

«Are we paying for Vietnam by seeing our children become monsters.» Այսպես կը գրեր ամերիկացի գրագիտուհի Մեյ Սարթոն (May Sarton), տակաւին 1977 թուականին, ակնարկելով Ամերիկայի մէջ տիրող յոռի բարքերուն եւ անհեթեթ սպանութիւններուն:

Այսօր Ռդիմպիական խաղերուն բացումն է Փարիզի մէջ, ամենէն ծայրայեղ, երեւակայութեան սահմանները հատող արարողութեամբ մը, այնքան ծայրայեղ, որքան Պաղեստինի մէջ շարունակուող սպանող, որուն անխիպօրէն պատերազմ անունը կու տան. պատերազմը երկու հաւասար զօրքերու բախումը չէ՞. իսկ այստեղ ամբողջ ժողովուրդ մը կը խողխողով վայրկեանէ վայրկեան, ամենէն դիւրին միջոցներով՝ հրթիռներով, ռումբերով, առանց խնայելու մարդիկ կամ անհրաժեշտ կառոյցներ՝ հիւանդանոցներ, շտապ օգնութեան միջոցներ եւ այլն:

Ամերիկացիներուն համար նոր ժամանակներու «անասնացումը» կը սկսի Վիետնամի պատերազմով, իսկ մեզի համար՝ շա՛տ աւելի կանուխ, 19-րդ դարուն, Ատանայի ջարդերով:



Մարդ արարածը ե՞րբ վերադարձաւ իր անասնական կիրքերուն, սպանելու բնագոյին, մոռցաւ իր մարդկութիւնը, որուն համար դարեր ծախսուեր էին եւ անչափելի ճիգ:

Կամ ալ՝ մարդ արարածը իր բնագոյներէն վեր չէր ելած, եղածը բարակ ջնարակ մըն էր միայն, որ այսօր արդէն գոյները թափած է ... եւ կը շարունակուի Աբել-Կայեֆի պատմութիւնը, առանց վերջաբանի, առանց վերջ մը ունենալու յոյսի:

Երբ Լիամ Նիսըն դերասանը, որպէս ԻւնիՍԵՖ-ի դեսպան կը սկսի համակարգիչիս պաստառէն խօսիլ նիւթական օգնութեան անհրաժեշտութեան մասին, չեմ կրնար կասկածի տակ չառնել իր խօսքը, մանաւանդ իր արտայայտութիւնը այդ խօսքին ընթացքին, որ շատ աւելի որպէս դերասանութիւն կը տպաւորէ զիս, քան՝ սրտաբուխ խօսք:

Իրապէ՞ս կը հաւատայ ինքն իր կոչին: Աւելի արդիւնաւետ չէ՞ արդեօք կոչ ուղղել դարերցնելու պատերազմները, քան՝ «ազնուօրէն» օգնութիւն մուրալ:

Այսօր կը դիտեմ Փարիզի Ռդիմպիականին բացումը, բայց պաստառս երկուքի բաժնուած պիտի ըլլայ՝ բացումի շքեղ տեսարաններու հետ պիտի տողանցեն Արցախի բռնահանուած ժողովուրդն ու Պաղեստինի սպանուող քաղաքացիները. երկու ժողովուրդներուն ալ պայքարը հայրենիքի հողին համար է:

Բայց ինչի՞ համար է իսրայելացի-ազերի-թուրքի պայքարը: Կողոպուտի համար անշուշտ: Եւ ինչպէս որ Վիետնամի արձագանգը արդէն վաղուց կը լսուի Ամերիկայի դպրոցներուն բազմաթիւ սպանութիւններուն մէջ, այդպէս ալ բորենի երկիրներուն համար իրենց արարքներուն արձագանգը պիտի լսուի իրենց իսկ ապագայի սերունդներուն մէջ: Չօրաւոր քացախը կարասը կը ճաթեցնէ, կ'ըսէ ժողովրդական առածը:

Մարդկութիւնը կարծես երկու խմբաւորումներու բաժնուեր է՝ տառապողներ եւ անտարբերներ. երկուքն ալ ծնունդն են աւելի վեր կեցած դեկավարներու փոքրաթիւ խումբի մը: Առաջինները շատ աւելի են, քան երկրորդ խումբին պատկանողները:

Արդեօ՞ք շատ պարզուսակ են մտածումներս, արդեօ՞ք այս ամբողջը անհրաժեշտ է մարդկային յառաջդիմութեան համար: Բայց ինչպէ՞ս ժխտական արարք մը կամ արարքներ կրնան դրական շարժիչներ ունենալ, կամ դրական արդիւնքներու հասնիլ ...

Փարիզի Ռդիմպիականին բացումը բաւական մեղան հոսեցուց ինչպէս օտարներուն, նոյնպէս եւ հայերուն քով: Շատ շատեր անդրադարձան երեւոյթներու, որոնց մենք՝ սովորական դիտողներս, այդքան իրարանցումին եւ այդքան երկա՛ր հանդիսութեան ընթացքին ուշադրութիւն չէինք դարձուցած:

Մեծ ուշադրութեան եւ ժխտական մտորումներու արժանացաւ Վերջին Ընթրիքին ծաղրանկար-կենդանի պատկերը:

Այլ պատկեր մը՝ Ֆրանսայի գլխատուած թագուհին՝ Մարի Անթուանէթը ներկայացնող տեսարանն էր՝ թագուհիին կերպարը, գլխատուած գլուխը ձեռքին: Մարդիկ գայթակղած էին խորապէս ...

Նոյն միջոցին, թերեւս ալ նոյն ժամերուն, հեռատեսիլէն ցոյց կու տային Կազգայի սպանուած փոքրիկներուն թաղումը, գլխատուած գլուխներ առանձին, որոնք կը տեղաւորուէին մարմինները ամփոփող

պատանքներուն մէջ: Ահաւոր բան էր դիտել այդ փոքրիկ, անմեղ ու անմարմին գլուխները ...

Բայց ո՞չ մէկ խօսք լսուեցաւ այդ մասին. կարծեք Փարիզի Ռդիմպիականին բացումը նպատակադրած էր ձեռով մը խլացնել Կազգայէն, Պաղեստինէն լսուող օգնութեան ճիչերը:

Իր կարծ բայց շատ դիպուկ վերլուծումին մէջ Ներսէս Սարգիսեան Դիմատետրի իր էջին կը գրէ, եւ նկարագրել էտք այդ հանդիսութեան խիստ տպաւորիչ բաժինները, կ'ըսէ.

«Անցեալին Ռդիմպիական խաղերու բացման արարողութիւնները կը հաղորդէին մրցակցային, զուարճալի, մշակութային բովանդակութեամբ, բաժանարար սահմանները շրջանցել փորձող, մարդկութիւնը միատրուած տեսնելու ձգտող, աշխարհին բարութիւն, կայունութիւն եւ խաղաղութիւն ցանկացող պատգամներ, անոնք կը շեշտաւորէին մարդկային համընդհանուր արժէքներ, նաեւ հիւրընկալող երկիրը կը խրախուսէին մարքէթինկի իմաստով:

Փարիզի միջոցառումը սակայն այդպէս չէր: Ան փիլիսոփայական, միսոնարական աշխատանք մըն էր:

Ան դաւանանքի մը աղօթքն էր, Նեոլիպերալիզմի քաղաքականութեան մշակութային հատուածին մէջ (կրօնական) նոր արտադրանք մըն էր, մարմնի պաշտամունքի ու ցանկութիւններու խթանմամբ, որպէս մարդկային գոյութեան նպատակ:

Այնտեղ չէին պակսեր դաւանական յարձակումները, յատկապէս քրիստոնէութեան դէմ:

Քրիստոսի եւ աշակերտներուն Da Vinci-ի «Վերջին Ընթրիք»-ի պատկերը փոխարինելով այլասերած պատկերով մը, այլասերած պատգամ մը կը փոխանցուի, որ կ'աւետէ «հաճոյքներու ու հեշտանքի աստուծոյ յաղթանակը, ցաւի աստուծոյ դէմ»:

Փարիզի միջոցառումը նեոլիպերալ հաւատքով, շահարկման վիճակ մը կը փորձէ ստեղծել կրօններու եւ ազգերու հաշուոյն: Այս պատճառով կարելի չէ այս գլուխ-գործոցը հին գնահատականներով նկարագրել:

Այստեղ աշխարհի ու կեանքի երազային, ռոմանթիկ, բարիին եւ խաղաղութեան նայելու պատգամ չկայ, կայ լոկ մարդկութեան պարզած նողկալի իրականութիւնը: Գոյներու հիասթափեցնող տեսարաններու ընդմէջէն կայ երկրային գոռոզութիւն մը, փոխաբերաբար՝ յունական հին խաղերու փիլիսոփայութենէն կայ նոր կրօնի մը ձեւաւորման մասին յայտարարութիւն մը:

Միջոցառումը նաեւ քաղաքական եւ բարոյական ճգնաժամի մը անդրադարձն է, երբ բացակայ է հսկայ բեւեռ երկիր մը ու ներկայ են ցեղասպան երկիրներ:

Կարծեք Արեւմուտքը ըսել կ'ուզէ՝ «ահաւասիկ մեր նաւերը, ուր կրնան բարձրանալ անոնք, որոնք կ'ընդունին մեր նոր աստուածները, թէկուզ որպէս ճորագործներ, եւ պիտի անտեսուին, լուսանցքացուին եւ ոչնչացուին անոնք, որոնք կը մերժեն մեր հաւատամքը. անոնք համար մեր նաւերուն վրայ տեղ չկայ»:

Որքան կը մեծնամ, այնքան կը պակսի դիմադրականութիւնս չարին դիմաց, կամ կեանքին, ինչպէս շատ շատեր կ'ուզեն ըսել՝ «Այս է կեանքը, պէ՛տք է յարմարիլ անոր»:

Բայց յարմարիլ ժխտական երեւոյթներուն, ընդունի՞լ զանոնք: Աշխարհի ամբողջ դիտեց Փարիզի Ռդիմպիական խաղերուն բացումը, առանց անդրադառնալու: Ինչպէ՞ս մարդոց միտքերուն սրկուող խեղ եւ թաքուն գաղափարներուն: Զանի՞ն պիտի անդրադառնայ ստոր, եւ քանի՞ հոգի պիտի կարենայ յստակօրէն բանաձեւել այդ հանդիսութենէն սփռուող գաղափարները, անոնց ժխտականութիւնը:

Մեր միսթարանքը այն է, որ Սփիւռքի տարածքին, փառք Տիրոջ, ունինք տրամաբանող, հասուն, խորագետ եւ խորատես մարդիկ, որոնք կրնան նման հանդիսութիւններու թաքուն ծալքերը բանալ:

Մեզի կը մնայ մեր ուղին ճշդել:

**ՅԶԾԻ ԱՕՕԶԹԱՕԹԱԵԻ ԶԾԵԹ**

**Սուրիոյ Հայ Աւետ. Համայնքի գրասենեակը կարիքը ունի քարտուղարուիիի:**

Դիմողները պարտին ունենալ՝

- Հայերէնի եւ անգլերէնի լաւ իմացութիւն,
- Համակարգչային գիտութեան հմտութիւն,
- Վարչական աշխատանքներու կառավարման փորձառութիւն:

**Փափաքողները կրնան դիմումները ներկայացնել Սուրիոյ Հայ Աւետ. Համայնքի Համայնքապետարանի գրասենեակ, տիկ. Արագ Մանսուրեան-Շահինեանին, առաւօտեան ժամը 9:00-էն յետմիջօրէի ժամը 2:00:**

## Թուրքիոյ նուրջ

### Անձնակազմի փոփոխումները և իրադրությունը

Թուրքիոյ նախագահ Ռեճեօ Թայյիօ Էրտողան յայտարարեց, որ Անգարա կրնայ Իսրայելի մուտք գործել ճիշդ այնպէս ինչպէս Արցախն է Լիպիա մուտք գործեց, եւ ոչինչ անոր կ'արգիլէ:

«Պէտք է շատ հզօր ըլլանք, որպէսզի Իսրայել չկարենայ բռնագրաւել Պաղեստինը այս բաները ընել: Ընդհանրապէս ինչպէս Ղարաբաղ մուտք գործեցինք, ճիշդ այնպէս ինչպէս Լիպիա մուտք գործեցինք, կրնանք նոյնը անոնց ընել: Չկայ բան մը, որ չենք կրնար ընել: Միայն պէտք է հզօր ըլլանք», յայտարարեց Էրտողան:



Թուրքիոյ նախագահը անդրադարձաւ 24 Յուլիսին Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանիահուի Միացեալ Նահանգներու Քոնկրէսին մէջ ճառ արտասանելուն՝ յայտնելով, որ անոնք, որոնք աշխարհին շարունակ ժողովրդավարութեան ու մարդու իրաւունքներու դասեր կու տային, նուազադրամօր չզգացին «մերօրեայ շիջեր»-ին ծափահարելու:

Ան աւելցուց, որ այն, ինչ որ տեղի ունեցաւ, հոգեկան քայքայման նման է, որովհետեւ չբաւարարուեցան «Կազմակերպութիւն 150 հազար պաղեստինցիներու արհմտակալներու շարժարար մը հիւրընկալելով, այլ կը ծափահարեն անոր ցնորքներով լեցուն ճառին»:

Թուրքիոյ Արտաքին գործոց նախարարութիւնը հաղորդագրութիւն մը հրատարակելով յայտնեց. «Իսրայելի ցեղասպան վարչապետ Բենիամին Նեթանիահուի վերջը նացի դեկաւար Ատուլֆ Յիթլերին նման պիտի ըլլայ»: Ապա աւելցուց. «Մարդկութիւնը պաղեստինցիներուն կողքին պիտի կանգնի»:

«Պիտի չկարենանք զանոնք բնաջնջել», յայտնեց նախարարութիւնը՝ աւելցնելով. «Այնպէս ինչպէս նացիները՝ հաւաքական ոճիրներու գործիչները հաշուետուութեան ենթարկուեցան, այդպէս ալ պաղեստինցիները ցեղասպանութեան ենթարկելի փորձողները հաշուետուութեան պիտի ենթարկուին»:

Միւս կողմէ, Ատրպէյճանի Պաշտպանութեան նախարարութիւնը արձագանգած է Թուրքիոյ նախագահի յայտարարութեան: Նախարարութիւնը պատասխանելով «15իուզ»-ի հարցումին դիտել տուած է, որ զինուորական գործողութիւններուն որեւէ երկրի զինուորներու մասնակցութեան մասին յայտարարութիւնը որեւէ հիմք չունի:

### Պաշտպանութեան նախարարութիւնը արձագանգած է Թուրքիոյ նախագահի յայտարարութեան: Նախարարութիւնը պատասխանելով «15իուզ»-ի հարցումին դիտել տուած է, որ զինուորական գործողութիւններուն որեւէ երկրի զինուորներու մասնակցութեան մասին յայտարարութիւնը որեւէ հիմք չունի:



Բրիտանական «Reuters» լրատուական գործակալութեան համաձայն՝ Իսրայելի արտգործնախարարութիւնը տեղի ունեցածին վերաբերեալ յայտարարութիւն տարածած է:


Յայտարարութեան մէջ կը յիշուի արտաքին գործոց նախարար Իսրայել Կացի կողմէ դիւանագետներուն տրուած յատուկ յանձնարարութեան մասին:

«Թուրքիոյ նախագահ Էրտողանի՝ Իսրայելը բռնագրաւելու սպառնալիքներուն եւ վտանգաւոր խօսոյթին լոյսին տակ արտաքին գործոց նախարար Իսրայել Կացի դիւանագետներուն յանձնարարած է Թուրքիան դատապարտելու մասին կոչերով եւ տարածաշրջանային դաշնակիցի դուրս գալուն պահանջով շտապ կապուիլ ՆԱՏՕ-ի բոլոր անդամներուն հետ»:

Յիշեցնենք, որ Էրտողանի սպառնալիքներէն ետք, Կացի զուգահեռներ գծած էր Թուրքիոյ նախագահին եւ Իրաքի նախկին նախագահ Սատտամ Յուսէյնի միջեւ՝ յիշեցնելով վերջինիս վախճանը:

### Ինչպէս կ'արձագանգուի Թուրքիոյ նախագահի յայտարարութեանը Իսրայելի կողմէ:

Հայաստանի Արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարութիւն հրատարակած է Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին առնչուող յատուկ ներկայացուցիչներու 5-րդ հանդիպումին մասին:



Յայտարարութեան մէջ ըսուած է. «30 Յուլիսին Հայաստանի եւ Թուրքիոյ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացի յատուկ ներկայացուցիչներ, Հայաստանի Ազգային ժողովի նախագահի տեղակալ Ռուբէն Ռուբինեան եւ դեսպան Սերտար Զըլըջ հինգերորդ հանդիպումը ունեցած են երկու երկիրներու սահմանի Մարգարա-Ալիջան անցումի կետին վրայ»:

## ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՆԿԻՒՆ

### Ստանդարտները



Փաթիլ Շաթոյեան

Արդէն մուտք գործեցինք Օգոստոս ամիս՝ մեր նախասիրած ամիսներէն մին:

Այս տարի 4-րդ կարգի պատանի եմ եւ անհամբեր կը սպասեմ մեր տարեկան բանակումին, ուր միասնաբար պիտի ապրինք անմոռանալի օրեր:

Քանի մը օր առաջ, Պատանեկան Միութեան ժողովին ընթացքին իմացանք, որ այս տարուան բանակումը 25 Օգոստոսին է: Չեմ կրնար բացատրել ուրախութիւնս: Անհամբեր սպասեցի ժողովին աւարտին, որպէսզի տուն դառնալով տեղեկացնեմ ընտանիքս:

Հաւանաբար բանակումը շատերու համար բանակումը պարզ ճամբորդութիւն մըն է պարզապէս, սակայն ինծի համար այդպէս չէ:

Պարզեմ, թէ ինչո՞ւ բանակումը այսքան անհամբերութեամբ կը սպասենք:

Իրիկուան կը հաւաքուինք ԱԶԵ ճեմարանի բակը, ուր փոխադրամիջոցները մեզի կը սպասեն այդ լայն տարածքով բակին մէջ: Ընտանիք, ընկերներ եւ բարեկամներ եկած կ'ըլլան մեզ ճամբելու:



Յանկարծ այս իրարանցումի ընթացքին սուլիչի ձայն մը կը լսուի, որ կը նշանակէ թէ պէտք է հաւաքուինք, որովհետեւ մեկնումի ժամը մօտեցած է: Մասնակիցները հաւաքուելով՝ ազգային-յեղափոխական երգերով բանակումի մթնոլորտին առաջին նշուները կը յայտնաբերեն: Ապա քայլերգով տեղի կ'ունենայ բանակումին բացումը:

Ընդհէ Է որ շաբաթ մը ամբողջ կ'անցնենք մեր ընտանիքներէն հեռու, ինչպէս նաեւ կը ճամբորդենք երկար ու յոգնեցուցիչ ճամբաներով, սակայն այս բոլորը կը մոռցուին ընկերային ջերմ մթնոլորտին մէջ:

Ճամբորդութեան ընթացքին երգելէ ու բաւական յոգնելէ ետք, ոմանք կը քնանան. ու յանկարծ կը լսուի աւետումը. «Հասա՛նք, հասա՛նք»: Այս աւետիսը կ'արթնցնէ բոլորը: Կը հասնինք բանակավայր ու կը կատարուի խումբերու բաժանումը:

Այսպէս կը սկսի մեր առաջին օրը՝ մարզանք, նախաճաշ, դասախօսութիւն, խաղեր, ճաշ, պտույտ, ընթրիք, խրախճանք եւ կը հասնի քնանալու ժամը:

Յաջորդ առաւօտ կ'արթնանք ու կը սկսինք մարզանքի, ետքը անհամբեր կը սպասենք մեր Ռատիո ժամը, որ երգերով, գիտելիքներով եւ հանելուկներով կը զուարճացնէ ու կը զարգացնէ մեզ:

Անցնինք նախաճաշին: Վատահ եղէ՛ք, որ նախաճաշը տեղի չ'ունենար առանց բարձր կանչերու, յեղափոխական ու ազգային երգերով յագեցած մթնոլորտի: Դասախօսութիւններէ, գրոյցներէ եւ զանազան խաղերէ ետք կարգը կը հասնի խարուկահանդէսի պատրաստութեան աշխատանքներուն, որոնք կ'ընդգրկեն երգ, ասմունք, զատեղտ, պար, եւ այլն... Այսպիսով օրերը կ'անցնին կայծակնային արագութեամբ եւ կը հասնի 7-րդ օրը՝ խարուկահանդէսի օրը:

Խարուկահանդէսին մեր 7 օրուան սորվածները կը ներկայացնենք այցելու ընտանիքներուն ու բարեկամներուն:

Հիմա գրիչս պիտի ձգեմ ու ձեր գրառումը ակնկալեմ: Իրաւունք չունի՞մ այսքան անհամբերութեամբ սպասելու բանակումին, մեր ներաշխարհին մէջ անմոռանալի յիշատակներ թաշող այս հետաքրքրական եւ օգտակար շաբթուան...:

Հալէպ







## Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

-Սուրիոյ Ողիմպիական պատուիրակութիւնը ժամանեց Փարիզ՝ մասնակցութիւն բերելու Փարիզ 2024-ի Ողիմպիական մրցումներուն:

Սուրիա իր մասնակցութիւնը պիտի բերէ ծանրամարտի, ձիարշաւի, լողի, ճիտոյի եւ արթնի մարզաձեւերուն: Պատուիրակութեան պատասխանատուն է Սուրիոյ Մարզական Գերագոյն Դաշնութեան փոխնախագահ Ալաա ճոխաճին:



-Անցեալ շաբթուան ընթացքին, Սուրիոյ Պասքէթի Դաշնութիւնը գումարեց խորհրդածողով մը, ուր քննարկուեցաւ նախորդ տարեշրջանի գործընթացը, ինչպէս նաեւ ներկայացուեցան առաջարկներ, որոնք պիտի վաւերացուին ընդհանուր ժողովի ընթացքին:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ՓԱՐԻԶ 2024 ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ԲԱՅՈՒՄՑ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԵՑԱՆ

Ուրբաթ 26 Յուլիսին, Փարիզի մէջ տեղի ունեցաւ Ողիմպիական 2024-ի ամառնային մրցումներու բացման արարողութիւնը, որ առաջին անգամ ըլլալով կայացաւ ֆութպոլի դաշտէ դուրս:



Փարիզի նշանաւոր ՍԷՆ գետին շուրջ: Արարողութիւնը սկսաւ տեսերիզով մը, ուր Չենատտին Չիտան, որ բարձրացուցած էր համաշխարհային ֆութպոլի 1998 ախոյեանութեան բաժակը, Ողիմպիականի ջահը բարձրացուցած կը շրջէր Փարիզի պողոտաները: Բացման արարողութեան ներկայ էին 6800 մարզիկներ, որոնք ժամանած էին 205 երկիրներէ: Առաջին երկիրը, որ մուտք գործեց Յունաստանն էր, իրեն յաջորդեցին մնացեալ բոլոր երկիրները, որոնք նաակներով ՍԷՆ գետին վրայ ներկայացան 320 հազար հանդիսատեսի, բարձրացնելով իրենց երկիրներու դրօշները:

### ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅ ԻՐ ՆՈՐ ԽԱՂԱՅՈՂԸ՝ ԷՆՏՐԻՔԸ

Ռեալ Մատրիտի Սանթիակո Պերնապէյի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ Արքայական ակումբի նորեկ, Պրագիլի հաւաքականի 18-ամեայ յարձակող Էնտրիքի շնորհանդէսը: Ֆութպոլիստը արագիլական Բալմերասի ակումբէն տեղափոխուեցաւ Սպանիա՝ Ռեալին հետ կնքելով 6 տարուան պայմանագրութիւն: Ան հանդէս պիտի գայ 16 թիւը կրող խաղաշապիկով: Բալմերասի գլխաւոր խումբին հետ Էնտրիք մասնակցած է 80 մրցումի, նշանակած է 21 կոլ եւ կատարած՝ 4 կոլային փոխանցում: Transfermarket-ը Էնտրիքի փոխադրութեան արժեքը սահմանած է 60 միլիոն եւրոյով:



### ՌԱՖԻՆԻԱ ՊԱՅԱՆՁՈՒՄԸ Է ԱՐՍԵՆԱԼԵՆ

Սպանական Mirror-ը յայտնեց, որ Լոնտոնի Արսենալ խումբը կը փորձէ ձեռք բերել Պարսելոնայի 27-ամեայ արագիլցի յարձակող Ռաֆինիան: Պարսելոնան տեղափոխութեան համար պահանջած է 50 միլիոն եւրո:



Ռաֆինիա 2022 թուականէն ի վեր հանդէս կու գայ քաթալոնեական ակումբին հետ: Սպանիոյ անցած առաջնութեան ան մասնակցած է 28 մրցումի եւ նշանակած է 6 կոլ՝ կատարելով 9 կոլային փոխանցում: Ռաֆինիայի պայմանագիրը Պարսելոնայի հետ նախատեսուած էր մինչեւ 2027:

### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 372)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1						■						
2									■			
3												
4		■	■	■	■					■		
5								■				■
6			■			■						
7										■		
8	■								■			■
9												
10		■				■						■
11	■					■						
12			■						■			■

### Յորիզոնական

- 1. Թիթեղ: Տաղանդ, քանքար:
- 2. Իգական անուն: Յոգնակերտ մասնիկ: Հաստատական պատասխան:
- 3. Հացաբոյսերու ընտանիքին պատկանող արմտիք: Հակառակ՝ ափ:
- 4. Յիսուսի ծնած վայրը:
- 5. Հին աստուածներ: Հակառակ՝ 7001: Հակառակ՝ շարունակ:
- 6. Հակառակ՝ 420: Տառի մը հարեւանները: Այս տարի իր հիմնադրութեան 45-ամեակը բոլորած երիտասարդական միութիւն:
- 7. 5400: Ճնշող: Հակառակ՝ անձնական դերանուն:
- 8. Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «.....»-ը որ հաւերուն ջուր տուող շատ կ'ըլլայ»: Յետոյ:
- 9. Վահան ՏԵՐԵԱՆԻ հայրենասիրական բանաստեղծութիւններու հատորը (երկու բառ):
- 10. Կրկնուած ձայնաւորներ: Լեզուով մը՝ այո:
- 11. Առանց աղի: Դրան շրջանակի ճարտարապետական մարդակ:
- 12. Չայնանիշ: Հայաստանի հիւսիսը գտնուող մարզ:

### Ուղղահայեաց

- 1. Արքայի գլխուն թագ դնող իշխան:
- 2. Արական անուն: Հակառակ՝ ազգութեամբ յոյն աշխարհահռչակ երգահան: Կրկնուած ձայնաւորներ:
- 3. Յոգնակերտ մասնիկ: Թուր:
- 4. Իգական անուն: Կարօտնալ:
- 5. Կարմիր հատիկներով կոնաբեր ծառի տեսակ: Պատերազմական կալանաւոր: Բայական լծորդութիւն:
- 6. Հակառակ՝ խուզուած ու մաքրուած ոչխարի բուրդ: Մեծ ծրար:
- 7. Սուրբ Հոգիին արդիւնքներէն (պտուղներէն):
- 8. Արփի: Նոր:
- 9. Կրկնուած բաղաձայններ: Հակառակ՝ քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ պետական կրօնը հռչակուելու թուականը:
- 10. Հնարք, ելք: Հակառակ՝ ցուցական դերանուն: Յուցակագրելու թղթիկ:
- 11. Հակառակ՝ 301: Կռթնելու տեղ:
- 12. Վայրկեան: Հակառակ՝ տարի: Տառի մը անունը:

### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 371)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	բ	ռ	ք	ե	ա	ի	հ	ա	մ	ա	կ	
2	ա	ւ	դ			հ	կ	ա	ր	ո		
3	զ	ր	ն		վ	ա	ն	կ	ա	ն		
4	ա		ւ	ա	մ		ն	ա	ր	ա		
5	ժ	ր	ա	ե	ա	լ			ն	բ		
6	ա	ո	ա	գ	ա	ս	ը			կ	է	
7	ո						ր	ն		ա	ր	
8	ա	խ	տ		զ	ր	տ	ա	խ	տ		
9	ն		ա	ր	ն	ւ		ր	տ	ա	լ	
10	զ	ա	ր	ա	հ	ի	ս	ա	ր	կ	ա	
11		ն	ւ	ն	ք	ն	ն	ք	ս			
12	բ	ա	ց	ա	ն		լ	ի	մ	ա	ս	

ÈàóÌ àòò

°ñĭ àòß³µÃÇ  
5/8



24° 38°

°ñ»նß³µÃÇ  
6/8



24° 39°

âáñ»նß³µÃÇ  
7/8



24° 40°

ԾՇԿ՝ Ե³µÃÇ  
8/8



29° 39°

àðñµ³Ã  
9/8



24° 38°

Բ³µ³Ã  
10/8



23° 39°

ÎÇñ³İÇ  
11/8



25° 41°

## ՀԱՄԱԳԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՔԻՆ ԲԱԶՄԱԶԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ ԿԸ ԿԱՏԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

13 Յուլիս 2024-ին Երեւանի մէջ ընթացք առած Համագային Հայ Կրթական Եւ Մշակութային Միութեան ուսանողական հաւաքը (Ֆորում) աշխուժ կերպով կատարեց իր աշխատանքները:

Արդարեւ, Հինգշաբթի, 18 Յուլիսին ֆորումականներուն օրը սկսաւ Երեւանի պետական համալսարան այցելութեամբ, ընկերակցութեամբ Համագայինի Երեւանի գրասենեակի տնօրէն Ռուզան Առաքելեանի: Համալսարանի սփիւռքագիտութեան ամպիոնի վարիչ Արման Եղիազարեան ֆորումականներուն ծանօթացուց պետական համալսարանի բաժանմունքներն ու ընդհանրապէս համալսարանը: Անկէ ետք անոնք այցելեցին Կոմիտասի թանգարան եւ պանթէոն, ծանօթացան Կոմիտասի կեանքին, գործունեութեան, անոր ճգած հարստութեան, անոր պատկանող եւ թանգարանին մէջ պահպանուած իրերուն: Ապա անոնք ուղղուեցան Սասունցի Դաւիթի արձանին մօտ, որուն մասին տեղեկութիւններ ստացան:



Կեսօրէ ետք ֆորումականները ջերմ հանդիպում ունեցան «Ակունք» ազգագրական համոյթի անդամներուն հետ, իսկ խումբի ղեկավար Արթուր Շահնազարեան անդրադարձաւ իրենց գործունեութեան, ազգային երգերու եւ մշակոյթի պահպանման ու տարածման անհրաժեշտութեան:



Ուրբաթ, 19 Յուլիսին ֆորումականները իրենց օրուան առաջին բաժինը անցուցին բնութեան գիրկը՝ Ծաղկածորի մէջ, ուր վայելեցին ճոպանուղին, շրջանի բնութեան գեղեցկութիւնը: Ապա, Նախորդ տարիներու աւանդութիւնը շարունակելով,

այս տարի եւս Համագայինի ուսանողական հաւաքի մասնակիցները այցելեցին Ծաղկածորի Տիրամայր Հայաստանի ճամբարը, ուր հիւրընկալուեցան ճամբարի փոքրիկներուն կողմէ, որոնց հետ ունեցան կիսօրեայ ճոխ ու հարազատ յայտագիր մը, միասին ճաշեցին, ընկերային պահեր ապրեցան, երգեցին, պարեցին ու խաղացին:

Կեսօրին մասնակիցները վերադարձան Երեւան, ուր անոնք տեղեկութիւններ ստացան «Ուիքիփետիա»-ի հայերէն բաժնի գործունեութեան, զայն հարստացնելու ձեռնարկը մասին՝ Ազիլի Ստեփանեանի եւ Շահէն Արապօղլեանի կողմէ:



Շաբաթ, 20 Յուլիսին ֆորումականները այցելեցին Խոր Վիրապ, մօտէն հաղորդուեցան Հայ եկեղեցւոյ կարեւորագոյն դրուագներէն մէկուն վայրին, անկէ ետք անոնք ունեցան ազատ ժամ, այցելեցին վերնխաժ: Երեկոյեան մասնակիցները ներկայ գտնուեցան Սօս Սարգսեանի անուան Համագայինի թատրոնի «Հրաշագործը» ներկայացումին:

Կիրակի, 21 Յուլիսին ուսանողական հաւաքին մասնակիցները այցելեցին Արագած Եւ Ամբերդ, անոնց ընկերակցեցաւ Յօղիկ Աշրագեանը, որ մանրամասն եւ համապարփակ տեղեկութիւններ տուաւ հայկական ճարտարապետութեան մասին, խօսելով յատկապէս բերդին իւրայատկութեան մասին:

Երկուշաբթի, 22 Յուլիսին ֆորումականները այցելեցին Օշական, ուր տեղւոյն հոգեւոր հովիւը ներկայացուց գիրքերու գիւտը, Մեսրոպ Մաշտոցի աւանդը, եւ զայն պահպանելու կարեւորութեան մասին խօսեցաւ:

## ՅՕ՝ ԲԵՆԵՎՈՐԱՅԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ ՄԸ ԹԵՄԵՐՈՒ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԵՒ ԿԻՒՐԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ ՄԸ ԹԵՄԵՐՈՒ ՆՈՐԸՆՏԻՐ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր մասնակցութիւնը բերաւ Մաշտոցեան Մատենադարանի Նախածեռնած Հայագիտական Միջազգային Բնակրէսին, որուն բացումը կատարուեցաւ Ուրբաթ, 19 Յուլիս 2024-ի առաւօտուն:



ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ, Գերշ. Ս. Շահան Արք. Սարգիսեան եւ Գրգ. Ս. Տաճատ Վրդ. Աշրագեան ներկայ գտնուեցան պաշտօնական բացումին, ինչպէս նաեւ այս միջոցին կազմակերպուած «Գրատօն» հայագիտական գիրքի ցուցահանդէս-տօնավաճառին, ուր ներկայացուեցան Հայաստանի եւ Սփիւռքի պետական թէ մասնաւոր հրատարակութիւններ, որոնց կարգին Կաթողիկոսարանիս տպարանէն վերջին հինգ տարիներուն լոյս տեսած հայագիտական հրատարակութիւններ: Այս առիթով կաթողիկոսութեանս միաբաններ՝ Գերշ. Ս. Թորգոմ Արք. Տօնոյեան ու Գերպ. Ս. Սահակ Ծ. Վրդ. Եմիշեան, ինչպէս նաեւ ազգայիններէն Միեր Տեր Յովհաննիսեան, որոնք Երեւան ժամանած էին ՀԱՍԿ Հայագիտական տարեգիրքի շնորհանդէսին մասնակցելու, միասին շրջեցան ու ծանօթացան Նոր հրատարակութիւններու:

«Գրատօն» ծրագրի իրականացման զուգահեռ կատարուեցաւ շնորհանդէսը ԺԳ. տարուան ՀԱՍԿ Հայագիտականին, որ նուիրուած է Սուրբ Ներսէս Դ. Շնորհալի հայրապետի վախճանման 850-ամեակին: Բացման խօսք արտասանեց Մատենադարանի աւագ գիտաշխատող Հայկ Համբարձումեան, որ բացատրեց ՀԱՍԿ տարեգիրքի անցած ճանապարհը եւ հրավիրեց փոխտնօրէն Վահէ Թորոսեանը, որ ողջոյնի, գնահատանքի եւ շնորհակալութեան խօսքով հանդէս եկաւ: Ապա, ԺԳ. հատորի բովանդակութիւնը ներկայացուց Մատենադարանի գիտաշխատող Էլիա Սարիբէկեանը:

Շնորհակալութեան խօսք արտասանեց նաեւ ՀԱՍԿ Հայագիտական տարեգիրքի խմբագիր, Կաթողիկոսարանի «Կիլիկիա» մատենադարանի տնօրէն Գերշ. Տեր Շահան Արք. Սարգիսեան:

ՀԱՍԿ Հայագիտական տարեգիրքէն օրհնակներ տրամադրուեցան քնկրէսի մասնակիցներուն:

Յայտնենք, որ ՀԱՍԿ Հայագիտական ԺԳ. հատորը լոյս տեսած է Ս. Աթոռի գահակալ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսին օրհնութեամբ, իսկ խմբագիրն է Շահան Արք. Սարգիսեան:

## ՄԵՍԻՍԻ ԶԾԾԾԾԾ ԵՒ ԱՆՏԻՍԻՆԻ ԵՒ ԱՆՏԻՍԻՆԻ ԱՆՏԻՍԻՆԻ ԵՒ ԱՆՏԻՍԻՆԻ



Անցնող քանի մը օրերու ընթացքին, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը յաջորդաբար ընդունեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կարգ մը թեմերու նորընտիր առաջնորդները. Կիպրոսի Հայոց Թեմի կաթողիկոսական փոխանորդ Գերշ. Ս. Կոմիտաս Արք. Օհանեան, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Գեղամ Արք. Խաչերեան, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Արք. Աշրագեան եւ Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերպ. Ս. Սահակ Ծ. Վրդ. Եմիշեան:

Վեհափառ Հայրապետը թեմակալ առաջնորդներուն անհրաժեշտ տեղեկութիւններ փոխանցեց իրենց թեմերուն մասին՝ շեշտելով Կաթողիկոսարանին հետ հետեւողական գործակցութիւն գարգացնելու կարեւորութիւնը, եւ ապա հոգեւոր հայրերուն թելադրութիւններ կատարեց իրենց ծառայութեան գծով:

Ապա անոնք ուղղուեցան Կիւմրի, ուր անոնց առաջին հանդիպումը եղաւ Արցախէն բռնի տեղահանուած մանուկներուն հետ. Շուշիի «Ծիլ» թատերական միաւորն ու արցախցի փոքրիկները սփիւռքահայ երիտասարդներուն մատուցեցին Արցախի բարբառով ներկայացում: Ապա անոնք այցելեցին Կումայրի թանգարան, ուր ծանօթացան քաղաքին պատմութեան:

Երեքշաբթի, 23 Յուլիսին մասնակիցները այցելեցին Կիւմրի քաղաքին զանազան թանգարանները, ծանօթացան Յովհաննէս Շիրազի, Ալեքսի Խահակեանի եւ Միեր Մկրտչեանի կեանքին ու գործունեութեան: